

Գեղարքունիքի մարզպետն ընդունեց Մոլդովայի խորհրդարանի փոխնախագահին

13.03.2018

Մարտի 13-ին ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի ուղեկցությամբ Գեղարքունիքի մարզ այցելեցին Մոլդովայի Հանրապետության խորհրդարանի փոխնախագահ Վլադիմիր Վիտյուկինը և ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի ագրարային քաղաքականության, բնական պաշարների և էկոլոգիական հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Վիլլետա Իվանովը: Սևանի քաղաքապետարանում նրանց հյուրընկալեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, հանդիպմանը մասնակցում էր նաև Սևանի քաղաքապետ Սարգիս Մուրադյանը : Հանդիպման մեկնարկին Կարեն Բոթոյանը նախ շնորհակալություն հայտնեց բարձրաստիճան հյուրերին Գեղարքունիքի մարզ այցելելու համար և հավելեց, որ նման հանդիպումները նպաստում են Հայաստանի և այլ երկրների վարչական միավորումների միջև բարեկամական հարաբերությունների ստեղծմանը և առկա համագործակցությունների խորացմանը: Զրույցի ընթացքում Կարեն Բոթոյանը ներկայացրեց նաև մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մասնավորապես կանգ առնելով զբոսաշրջության, գյուղատնտեսության և բնապահպանական անվտանգության հարցերի վրա:

Պատասխան խոսքում Մոլդովայի Հանրապետության խորհրդարանի փոխնախագահ Վլադիմիր Վիտյուկը շնորհակալություն հայտնեց մարզպետ Կարեն Բոթոյանին ջերմ ընդունելության համար և կարևորեց երկու երկրների տարբեր վարչական միավորումների միջև համագործակցության ընդլայնումը՝ հարաբերությունների հետագա զարգացման և խորացման տեսանկյունից: Կողմերը քննարկեցին նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր ևս : Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը ստացավ Մոլդովայի պատվիրակության ներկայացուցիչների հրավերն իրենց երկիր: